Հավելված N 18
ՀՀ կառավարության 2022 թվականի
օգոստոսի 11-ի N 1266 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՍՏՈՒԳԱԹԵՐԹ N
ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
(ՏԳՏԴ ծածկագրեր՝ 10.3, 10.6, 10.7, 10.8, 11.0)

____ _____20 թ.

_____
(Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) ստորաբաժանման անվանումը)

_____
(գտնվելու վայրը)

_____
(հեռախոսահամարը, էլ. հասցեն)

_____
(ՍԱՏՄ ծառայողի պաշտոնը)

_____
(ազգանունը, անունը, հայրանունը)

_____
(ՍԱՏՄ ծառայողի պաշտոնը)

_____
(ազգանունը, անունը, հայրանունը)

_____
(ՍԱՏՄ ծառայողի պաշտոնը)

_____
(ազգանունը, անունը, հայրանունը)

Ստուգման սկիզբը _____ ավարտը _____
(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

(տարեթիվը, ամիսը,
ամսաթիվը)

Ստուգման հիմքը _____
(ստուգման տարեկան ծրագիրը, դիմում-բողոքը և այլն)

_____ ☐☐☐☐☐☐☐☐
(տնտեսավարող սուբյեկտի անվանումը) (ՀՎՀՀ)

_____ _____
(տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը, կոնտակտային տվյալները) (հեռախոսահամարը, էլ. հասցեն)

_____ _____
(տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի ազգանունը, անունը, հայրանունը) (հեռախոսահամարը, էլ. հասցեն)

_____ _____
(ստուգվող օբյեկտի գտնվելու վայրը, կոնտակտային տվյալները) (հեռախոսահամարը, էլ. հասցեն)

Ստուգման հրամանի համարը _____ ամսաթիվը _____
Ստուգման նպատակը (ընդգրկված հարցերի համարները) _____

Տեղեկատվական բնույթի հարցեր		
NN ը/կ	**Հարցը**	**Պատասխանը**
1.	Տնտեսավարող սուբյեկտի անվանումը (ներառյալ իրավաբանական անձանց ֆիրմային անվանումը), անհատ ձեռնարկատիրոջ անունը, անձնագրային տվյալները (սերիան, համարը, ում կողմից է տրված)	
2.	Պետական գրանցման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	
3.	Պետական գրանցման համարը	
4.	Իրավաբանական անձի գտնվելու վայրը (փոստային հասցեն), անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը	

5.	Տնտեսավարող սուբյեկտի գործունեության իրականացման վայրը և կոնտակտային տվյալները (հեռախոսահամարը և կապի այլ միջոցներ)	
6.	Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող բոլոր առանձնացված ստորաբաժանումների անվանումները և գտնվելու վայրը (փոստային հասցեն), այդ թվում՝ հեռախոսահամարը և կապի այլ միջոցներ	
7.	Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող բոլոր առանձնացված ստորաբաժանումներում իրականացվող գործունեության տեսակները	
8.	Տնտեսավարող սուբյեկտների և դրանց առանձնացված ստորաբաժանումների պաշտոնատար անձանց կոնտակտային տվյալները (հեռախոսահամարը և կապի այլ միջոցներ)	
9.	Տնտեսավարող սուբյեկտների կողմից գործունեությունն սկսելու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	
10.	Տնտեսավարող սուբյեկտների օբյեկտների կառուցման (վերջին վերակառուցման (վերանորոգման) տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	
11.	Ապրանքային նշանի, հանրահայտ ապրանքային նշանի առկայության մասին տեղեկություն	
12.	Ներդրված որակի կառավարման համակարգը (եթե առկա են ISO 9001, HACCP, ISO 22000, ISO 14000)	
13.	Սննդի շղթայում ներգրավված աշխատողների թիվը	
14.	Թողարկվող արտադրատեսակները, այդ թվում՝ հատուկ նշանակության սննդամթերքի արտադրության	
15.	Կազմակերպության շրջանառության (իրացման) ծավալները՝ նախորդ տարվա տվյալներով (դրամ)	
16.	Նպատակային շուկան՝ միջազգային և (կամ) ազգային, մարզային, տեղական շուկաներ, նշել, թե որ շուկայում է արտադրանքն իրացվում:	

Վերահսկողական բնույթի հարցեր								
NN ը/կ	**Հարցեր**	**Այո**	**Ոչ**	**Չ/Պ**	**Կշիռ**	**Ստուգման եղանակ**	**Նորմատիվ ակտի համար**	**Նշումներ**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**
1.	**ԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՍԵՆՔԵՐ**							
1.1.	Արդյո՞ք արտադրական շինությունների նախագծումը, դրանց					ակնադիտական և	Մաքսային	

	կառուցվածքը, դասավորվածությունը և չափսը ապահովում են. 1) պարենային (սննդային) հումքի և սննդամթերքի, աղտոտված և մաքուր գույքի հանդիպական կամ խաչաձևվող հոսքերը բացառող տեխնոլոգիական գործառնությունների հոսքայնության հնարավորությունը. 2) սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում օգտագործվող օդի աղտոտման մասին նախազգուշացումը կամ դրա նվազեցումը. 3) կենդանիների, այդ թվում՝ կրծողների և միջատների՝ արտադրական շինություններ ներթափանցումից պաշտպանությունը. 4) տեխնիկական սարքավորումների անհրաժեշտ տեխնիկական սպասարկում և ընթացիկ վերանորոգում, արտադրական շինությունների մաքրման, լվացման, ախտահանման, միջատազերծման և կրծողների ոչնչացման գործընթացներ իրականացնելու հնարավորությունը. 5) տեխնոլոգիական գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ տարածությունը. 6) կեղտի կուտակումներից, արտադրվող սննդամթերքում մասնիկները թափվելուց, արտադրական շինությունների մակերևույթին կոնդենսատի, բորբոսի առաջացումից պաշտպանությունը. 7) պարենային (սննդային) հումքի, փաթեթավորման նյութերի և սննդամթերքի պահպանման պայմանները:				0.3 0.3 0.3 0.3 0.1 0.3 0.3	փաստաղթային զննում	միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 880 որոշմամբ հաստատված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգ) 14-րդ հոդվածի 1-ին կետի, 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետեր	
1.2.	Արդյո՞ք արտադրական շինությունները, որտեղ իրականացվում է սննդամթերքի արտադրությունը (պատրաստումը) սարքավորված են՝ 1) բնական և մեխանիկական օդափոխության միջոցներով, որոնց քանակը և (կամ) հզորությունը, կառուցվածքը և գործարկումը թույլ են տալիս խուսափել սննդամթերքի աղտոտումից, ինչպես նաև ապահովում են նշված համակարգերի ֆիլտրերի և մաքրման ու փոխման ենթակա այլ մասերի հասանելիությունը. 2) բնական կամ արհեստական լուսավորվածությամբ. 3) սանհանգույցներով, որոնց դռները չեն բացվում դեպի արտադրական շինություն և սարքավորված են մինչև նախամուտք մտնելուց առաջ աշխատանքային համազգեստի համար կախիչներով, ձեռքերը լվանալու համար նախատեսված լվացարաններով.				0.25 0.25 0.25	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 1-րդ հոդվածի 4-րդ կետի 2, 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ ենթակետեր	

	4) ձեռքերը լվանալու համար նախատեսված լվացարաններով՝ տաք և սառը ջրով, ձեռքերը լվանալու միջոցներով և ձեռքերը սրբելու և (կամ) չորացնելու համար նախատեսված սարքերով:				0.25			
1.3.	Արդյո՞ք արտադրական շինություններում չի պահվում անձնակազմի անձնական և արտադրական (հատուկ) հագուստ և կոշիկներ:				0.5	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 14-րդ հոդվածի 3-րդ կետ	
1.4.	Արդյո՞ք արտադրական շինություններում չի պահվում սննդամթերքի արտադրության (պատրաստման) ընթացքում չօգտագործվող ցանկացած նյութ և պարագա, այդ թվում՝ լվացող և ախտահանող նյութեր, բացառությամբ արտադրական շինությունների և սարքավորումների ընթացիկ լվացման և ախտահանման համար անհրաժեշտ լվացող և ախտահանող միջոցների:				0.5	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի14-րդ հոդվածի 4-րդ կետ	
1.5.	Արդյո՞ք արտադրական շինությունների մասերը, որտեղ իրականացվում է սննդամթերքի արտադրությունը (պատրաստումը), համապատասխանում են՝ 1) հատակների մակերևույթները պատրաստված են անջրանցիկ, լվացվող և ոչ թունավոր նյութերից, հեշտորեն լվացվում են, անհրաժեշտության դեպքում ախտահանվում, ինչպես նաև պատշաճ ձևով ցամաքեցվում. 2) պատերի մակերևույթները պատրաստված են անջրանցիկ, լվացվող և ոչ թունավոր նյութերից, որոնք կարելի է լվանալ և, անհրաժեշտության դեպքում, ախտահանել. 3) առաստաղները կամ դրանց բացակայության դեպքում տանիքների ներքին մակերևույթները և արտադրական շինությունների վերևում գտնվող կառուցվածքները ապահով են, ինչը կանխարգելում է կեղտի կուտակումը, բորբոսի առաջացումը և առաստաղից կամ այդպիսի մակերևույթներից և կառուցվածքներից մասնիկների թափվելու հնարավորությունն ու նպաստում խոնավության խտացման նվազեցմանը. 4) բացվող ներքին պատուհանները (վերնափեղկերը) ունեն հեշտությամբ հանվող և մաքրվող միջատապաշտպան ցանցեր.				0.3 0.3 0.3 0.3 0.3	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 14-րդ հոդվածի 5-րդ կետի, 1-ին, 2-րդ, 3 -րդ, 4-րդ և 5-րդ ենթակետեր	

	5) արտադրական շինությունների դռները հարթ, են՝ պատրաստված չներծծող նյութերից:							
1.6.	Արդյո՞ք արտադրական շինություններում կոյուղու համակարգերը նախագծված և իրականացված են այնպես, որպեսզի բացառեն սննդամթերքի աղտոտման ռիսկը:				0.5	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 14-րդ հոդվածի 7-րդ կետ	
1.7.	Արդյո՞ք արտադրական շինություններում չեն իրականացվում վերանորոգման աշխատանքներ այդ արտադրական շինություններում սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացի հետ միաժամանակ:				0.5	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 14-րդ հոդվածի 8-րդ կետ	
1.8.	Արդյո՞ք սննդի կառույցն ապահովված է անձնակազմի համար հանդերձարանով:				0.5	ակնադիտական զննում	Հայաստանի Հանրապետության կառավարության 20.01.2011թ. N 34-Ն որոշման հավելվածի 25-րդ կետի 6-րդ ենթակետ	
1.9	Արդյո՞ք սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում օգտագործվող տարբեր ագրեգատային վիճակներով ջուրը համապատասխանում է՝ 1) սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում օգտագործվող ջուրը, որն անմիջական շփման մեջ է գտնվում պարենային (սննդային) հումքի և փաթեթավորման նյութերի հետ, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ խմելու ջրին ներկայացվող պահանջներին. 2) սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում օգտագործվող գոլորշին, որն անմիջական շփման մեջ է գտնվում պարենային (սննդային) հումքի և փաթեթավորման նյութերի հետ, չի հանդիսանում սննդամթերքի աղտոտման աղբյուր. 3) սննդամթերքի արտադրության (պատրաստման)				0.3 0.3 0.4	ակնադիտական և փաստաթղթային զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետեր	

	գործընթացում օգտագործվող սառույցը պատրաստված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ խմելու ջրին ներկայացվող պահանջներին համապատասխանող խմելու ջրից:							
1.10	Արդյո՞ք սննդի կառույցը ապահովված է խմելու ջրի անխափան ջրամատակարարմամբ:				0.8	ակնադիտական և փաստաթղթային զննում	Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 46-րդ կետ	
1.11	Արդյո՞ք սահմանված է սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում օգտագործվող արտադրական շինությունների, տեխնոլոգիական սարքավորումների և գույքի մաքրման, լվացման, ախտահանման, միջատազերծման և կրծողների ոչնչացման գործընթացների պարբերականություն և իրականացվում է:				0.8	ակնադիտական և փաստաթղթային զննում	ՄՄ ՏԿ 021/2011 հոդված 10 կետ 3 ենթակետ10	
1.12	Արդյո՞ք սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում գոյացող թափոնները պարբերաբար հեռացվում են արտադրական շինություններից:				0.5	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 16-րդ հոդվածի 1-ին կետ	
1.13	Արդյո՞ք թափոնները, իրենց կատեգորիաներին համապատասխան, տեղադրված են առանձին մակնշված, սարքին վիճակում գտնվող և բացառապես այդ թափոնների ու աղբի հավաքման և պահպանման համար օգտագործվող փակվող տարողություններում:				0.5	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 16-րդ հոդվածի 3-րդ կետ	
1.14	Արդյո՞ք արտադրական շինություններից, սննդամթերքի արտադրության (պատրաստման) արտադրական օբյեկտի տարածքից թափոնների հեռացումը և վերացումը չի հանգեցնում սննդամթերքի, շրջակա միջավայրի աղտոտմանը, մարդու կյանքին և առողջությանը սպառնացող վտանգի առաջացմանը:				0.5	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 16-րդ հոդվածի 5-րդ կետ	
2.	**ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԱ**							
2.1.	Արդյո՞ք սննդամթերքի արտադրության և շրջանառության փուլերում, սննդամթերքի հետ անմիջական շփում ունեցող աշխատակիցները				1	փաստաթղթային զննում	Հայաստանի Հանրապետության	

	Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ենթարկվել են պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննությունների և ունեն սանիտարական (բժշկական) գրքույկ:						կառավարության 2011թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 55-րդ կետ, «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենք 16-րդ հոդվածի 6-րդ մաս	
2.2.	Արդյո՞ք սննդամթերքի միջոցով փոխանցվող հիվանդության վիրուսակիր կամ վարակիչ վերք, մաշկային հիվանդություն, խոց ունեցող անձինք չեն շփվում սննդամթերքի հետ և չեն մտնում սննդամթերքի տեղակայման գոտի, եթե առկա է սննդամթերքի վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցության հավանականություն:				0.5	ակնադիտական զննում	Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 54-րդ կետ, ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 17-րդ հոդվածի 11-րդ կետ	
2.3.	Արդյո՞ք սննդի շղթայում ներգրավված յուրաքանչյուր անձ պահպանում է անձնական հիգիենայի կանոնները և կրում է համապատասխան մաքուր, անհրաժեշտության դեպքում, պաշտպանիչ հագուստ:				0.5	ակնադիտական զննում	Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 53-րդ կետ	
3.	**ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՒՅՔ**							
3.1.	Արդյո՞ք սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում օգտագործվում են սննդամթերքի հետ շփման մեջ գտնվող տեխնոլոգիական սարքավորումներ և գույք, որոնք՝ 1) ունեն սննդամթերքի արտադրությունն (պատրաստումն)					ակնադիտական և/կամ/ փաստաթղթային զննում և/կամ/	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 15-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետեր	

	ապահովող կառուցվածքային և շահագործման բնութագրեր 2) հնարավորություն են տալիս իրականացնելու դրանց լվացման և (կամ) մաքրման և ախտահանման աշխատանքները. 3) պատրաստված են սննդամթերքի հետ շփման մեջ գտնվող նյութերին ներկայացվող պահանջներին համապատասխանող նյութերից:				0.3 0.3 0.3	լաբորատոր փորձաքննություն		
3.2.	Արդյո՞ք բոլոր սարքավորումները, գործիքները, պարագաները և բեռնարկղերը, որոնք անմիջական շփման մեջ են գտնվում սննդամթերքի հետ, կառուցված են հիգիենայի պահանջները բավարարող նյութերից և պահվում են նորոգ ու բարվոք վիճակում:				0.5	ակնադիտական զննում	Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 39-րդ կետի 2-րդ ենթակետ	
3.3.	Արդյո՞ք բոլոր սարքավորումները, գործիքները, պարագաները և բեռնարկղերը, որոնք անմիջական շփման մեջ են գտնվում սննդամթերքի հետ, ենթարկվում են պատշաճ մաքրման ու ախտահանման:				0.5	ակնադիտական և/կամ/ փաստաթղթային զննում և/կամ/ լաբորատոր փորձաքննություն	Հայաստանի Հանրապետության կառավարության 20.01.2011թ. N 34-Ն որոշման հավելվածի 39-րդ կետի 1-ին ենթակետ	
3.4.	Արդյո՞ք տեխնիկական սարքավորումները, ըստ անհրաժեշտության սարքավորված/հագեցված են համապատասխան հսկիչ սարքերով:				0.1	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 15-րդ հոդվածի 2-րդ կետ	
3.5.	Արդյո՞ք սննդամթերքի հետ շփման մեջ գտնվող տեխնոլոգիական սարքավորումների և գույքի աշխատանքային մակերևույթները պատրաստված են չներծծող նյութերից:				0.5	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 15-րդ հոդվածի 3-րդ կետ	
4.	**ՀՈՒՄՔԻ ԵՎ ՊԱՏՐԱՍՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ, ՓՈԽԱԴՐՈՒՄ, ՄԱԿՆՇՈՒՄ ԵՎ ՊԱՀՈՒՄ**							
4.1.	Արդյո՞ք սննդամթերքի արտադրության (պատրաստման) ընթացքում օգտագործվող պարենային (սննդային) հումքը և բաղադրիչները պահվում են այդ հումքի և բաղադրիչների փչանալը կանխարգելող և դրանց՝ աղտոտիչ նյութերից պաշտպանությունն ապահովող				0.8	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 13-րդ հոդվածի 4-րդ կետ	

	պայմաններում:							
4.2.	Արդյո՞ք սննդամթերքի արտադրության ժամանակ որպես համաբուրավետիչ նյութեր չեն օգտագործվում հետևյալ միացությունները՝ ագարիկաթթու, բետա-ազարոն, ալոին, հիպերիցին, կապսաիցին, կվասսին, կումարին, մենթոֆուրան, մեթիլէվգենոլ (4-ալլիլ-1,2-դիմեթօքսիբենզոլ), պուլեգոն, սաֆրոլ (1-ալլիլ-3,4-մեթիլենդիօքսիբենզոլ), կապտաթթու, տույոն (ալֆա և բետա), տեուկրին A, էստրագոլ (1-ալլիլ-4-մեթօքսիբենզոլ):				0.5	փաստաթղթային զննում և/կամ լաբորատոր փորձաննություն	Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշմամբ հաստատված «Սննդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՄՄ ՏԿ 029/2012) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ ՄՄ ՏԿ 029/2012 կանոնակարգ) 7-րդ հոդվածի 21-րդ կետ	
4.3.	Արդյո՞ք հումքը, բաղադրիչները, կիսապատրաստվածքը և վերջնական արտադրանքը, որոնցում հնարավոր է ախտածին մանրէների բազմացում կամ թունավոր նյութերի առաջացում, պահվում են դրանց առաջացումը կամ բազմացումը բացառող ջերմաստիճանում:				0.8	ակնադիտական զննում	Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 60-րդ կետ	
4.4.	Արդյո՞ք Եվրասիական տնտեսական միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումն				1	ակնադիտական զննում	Եվրասիական տնտեսական	

	իրականացված է մինչև ալկոհոլային արտադրանքը շրջանառության մեջ դնելը:						հանձնաժողովի խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 5-ի «Ալկոհոլային արտադրանքի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի մասին» N 98 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ ՏԿ 047/2018 կանոնակարգի (այսուհետ՝ ԵԱՏՄ ՏԿ 047/2018 կանոնակարգ) 58-րդ կետ	
4.5.	Արդյո՞ք Եվրասիական տնտեսական միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը զետեղված է ալկոհոլային արտադրանքի, բացառությամբ լցվածքով ալկոհոլային արտադրանքի, սպառողական փաթեթվածքի վրա՝ ալկոհոլային արտադրանքի պիտանիության ժամկետի ընթացքում դրա հստակ և պարզ պատկերումն ապահովող ցանկացած եղանակով, ինչպես նաեւ ներկայացված է ապրանքաուղեկից փաստաթղթերում:				0.8	ակնադիտական զննում	ԵԱՏՄ ՏԿ 047/2018 կանոնակարգի 59-րդ կետ	
4.6.	Արդյո՞ք փաթեթավորված սննդամթերքի մականշվածքը զետեղված է ռուսերեն և հայերեն լեզուներով, բացառությամբ ԵԱՏՄ ոչ անդամ երկրներից մատակարարվող սննդամթերքն արտադրողի անվանման և գտնվելու վայրի մասին տեղեկատվության:				0.8	ակնադիտական զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մաս, Մաքսային միության հանձնաժողովի 2011	

							թվականի դեկտեմբերի 9-ի N 881 որոշմամբ հաստատված «Սննդամթերքի մակնշման մասին» (ՄՄ ՏԿ 022/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգ) հոդված 4 կետ 4.1 2 ենթակետ, ՄՄ ՏԿ 022/2011 հոդված 4 կետ 4.8, 3 ենթակետ	
4.7.	Արդյո՞ք ալկոհոլային արտադրանքի մականշվածքը պարունակում է հետեւյալ տեղեկությունները՝ 1) ալկոհոլային արտադրանքի անվանումը: Ալկոհոլային արտադրանքի անվանումը կարող է լրացուցիչ նշվել լատինական այբուբենի տառերով (բացառությամբ «շամպայն», «կոնյակ» և «կալվադոս» բառերի): «Շամպայն», «կոնյակ» և «կալվադոս» բառերը կարող են լատինական այբուբենի տառերով նշվել միայն համապատասխան աշխարհագրական տարածաշրջանների ալկոհոլային արտադրանք արտադրողների կողմից: 2) արտադրողի և անդամ պետության տարածքում գրանցված ու արտադրողի կողմից՝ ալկոհոլային արտադրանքի վերաբերյալ սպառողներից դժգոհություններ ընդունելու (առկայության դեպքում) լիազորություն ստացած կազմակերպության, ինչպես նաեւ ներմուծող կազմակերպության (երրորդ երկրներից անդամ պետությունների տարածքներ ներմուծվող ալկոհոլային արտադրանքի համար) անվանումները և գտնվելու վայրերը (իրավաբանական անձանց հասցեները) (նշելով պետությունը). 3) էթիլային սպիրտի ծավալային մասը (թնդությունը) (ծավ. %).				0.1 0.1 0.1	ակնադիտական զննում	ԵԱՏՄ ՏԿ 047/2018 կանոնակարգի 31-րդ կետ	

	4) արտադրանքի ծավալը՝ միավոր սպառողական փաթեթվածքում (լ, դմ3 , սլ, մլ, սմ3).				0.1			
	5) շաքարների զանգվածային կոնցենտրացիան (գ/դմ3 , գ/լ, գ/100 սմ3).				0.1			
	6) բաղադրությունը (բաղադրիչների ցանկը՝ դրանց զանգվածային մասերի նվազման կարգով՝ բացառությամբ գինիների, լիկյորային գինիների, խաղուն գինիների, մարգարտային խաղուն գինիների, գազավորված գինիների, մրգային գինիների, կոնյակների, բրենդիների, այդ թվում՝ մրգային բրենդիների, վիսկիի, ռոմի եւ մեկ տեսակի հումքից պատրաստված ալկոհոլային արտադրանքի): Տեսակավոր գինիների համար նշվում է այն խաղողի տեսակը, որից դրանք պատրաստվել են: Օղիների եւ հատուկ օղիների համար առաջինը նշվում է օգտագործվող կրկնաթորված էթիլային սպիրտի տեսակը և լրացուցիչ՝ օղիների բույրի և համի վրա ազդող բաղադրիչների ցանկը.				0.1			
	7) մրգային գինիների, գինու մրգային խմիչքների, մրգային սիդրերի եւ մրգային օղիների, մրգային բրենդիների համար՝ այն մրգերի տեսակները, որոնցից դրանք պատրաստված են.				0.1			
	8) հնեցված գինիների և կոլեկցիոն գինիների համար՝ բերքահավաքի տարեթիվը, կոլեկցիոն խաղուն գինիների եւ բարձրորակ խաղուն գինիների համար՝ թողարկման ամսաթիվն ու տարեթիվը.				0.1			
	9) բարձրորակ խաղուն գինիների (խաղողի խաղուն շամպայն գինիների) համար՝ արտադրության մեթոդը (դասական կամ ռեզերվուարային).				0.1			
	10) կոնյակի, բրենդիի, բարձրորակ բրենդիի, կալվադոսի, մրգային բրենդիների, վիսկիի, ռոմի համար՝ թորվածքների հնեցման ժամկետը. ժա) գարեջրի եւ գարեջրի հիմքով պատրաստված խմիչքների (գարեջրային խմիչքների) համար՝ մշակման տիպը, եղանակը, չզտման մասին տեղեկություններ, լուծամզելիությունը (տոկոսներով) (գարեջրի համար), իրական լուծամզուքը (տոկոսներով) (գարեջրային խմիչքների համար).				0.1			
	11) արտադրության (շշալցման, պատրաստման, ձեւակերպման) ամսաթիվը և պիտանիության ժամկետը. Այն ալկոհոլային արտադրանքի մականշվածքը, որի նկատմամբ արտադրողը սահմանում է անսահմանափակ պիտանիության				0.1			

	ժամկետ, լրացված է հետևյալ գրառմամբ՝ «Պիտանիության ժամկետը սահմանափակված չէ՝ պահպանման պայմաններին հետեւելու դեպքում». 12) պահպանման պայմանները. 13) ցայտուն նախազգուշացնող գրառում, որը զետեղվում է մեծատառերով, ամենախոշոր չափի դյուրընթեռնելի տառատեսակով եւ զբաղեցնում է հակադարձ պիտակի, կամ պիտակի, կամ սպառողական տարայի մակերեսի առնվազն 10 տոկոսը. «Ալկոհոլի չափից ավելի օգտագործումը վնասակար է Ձեր առողջության համար:». 14) արտադրության ընթացքում օգտագործված սննդային հավելումների անվանումները (բացառությամբ արտադրական գործընթացի համար ֆունկցիոնալ առումով անհրաժեշտ սննդային հավելումների, որոնք չեն ներառվում պատրաստի ալկոհոլային արտադրանքի կազմում), տեղեկատվություն գենային ինժեներիայի եղանակով ձեւափոխված օրգանիզմների օգտագործմամբ ստացված բաղադրիչների առկայության մասին. 15) տեղեկատվություն արտադրանքի համապատասխանության գնահատման վերաբերյալ (Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշան). 16) թույլ ալկոհոլային խմիչքների համար՝ տեղեկատվություն սպառողական փաթեթվածքի ծավալում էթիլային սպիրտի պարունակության վերաբերյալ. 17) սպառողական տարայի (փաթեթվածքի) համար՝ գրառում՝ «Խորհուրդ չի տրվում օգտագործել մինչեւ 18 տարեկան անձանց, հղի և կերակրող կանանց, ինչպես նաեւ՝ նյարդային համակարգի եւ ներքին օրգանների հիվանդություններով տառապող անձանց»:				0.1 0.1 0.1 0.1 0.1 0.1			
4.8.	Արդյո՞ք տեղեկատվությունը զետեղված է դրա հստակ ընթեռնելիությունն ապահովող ցանկացած ձևով: Գրությունները, նշանները, խորհրդանիշները կոնտրաստային են այն ֆոնի նկատմամբ, որի վրա զետեղված է մականշվածքը:				0.8	ակնադիտական զննում	ԵԱՏՄ ՏԿ 047/2018 կանոնակարգի 32-րդ կետ	

4.9.	Արդյո՞ք լցվածքով ալկոհոլային արտադրանքի մակնշման ժամանակ ապրանքաուղեկից փաստաթղթերում տեղեկատվությունը պարունակում է՝ 1) արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի) անվանումը եւ գտնվելու վայրը (իրավաբանական անձի հասցեն). 2) ալկոհոլային արտադրանքի անվանումը. 3) տեղեկություններ արտադրանքի ծավալի վերաբերյալ. 4) խմբաքանակի համարը. 5) էթիլային սպիրտի ծավալային մասը (թնդությունը) (ծավ. %). 6) պահպանման պայմանները. 7) արտադրության ընթացքում օգտագործված սննդային հավելումների անվանումները (բացառությամբ արտադրական գործընթացի համար ֆունկցիոնալ առումով անհրաժեշտ սննդային հավելումների, որոնք չեն ներառվում պատրաստի ալկոհոլային արտադրանքի կազմում), տեղեկատվություն գենային ինժեներիայի եղանակով ձեւափոխված օրգանիզմների օգտագործմամբ ստացված բաղադրիչների առկայության մասին. 8) տեղեկատվություն արտադրանքի համապատասխանության գնահատման վերաբերյալ (Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշան):				0.8 0.8 0.2 0.2 0.2 0.2 0.2 1	ակնադիտական զննում	ԵԱՏՄ ՏԿ 047/2018 կանոնակարգի 35-րդ կետ	
4.10.	Արդյո՞ք ալկոհոլային արտադրանքի անվանումը, արտադրության (շշալցման, պատրաստման, ձևակերպման) ամսաթիվը և պիտանիության ժամկետը, «Ալկոհոլի չափից ավելի օգտագործումը վնասակար է Ձեր առողջության համար» գրառում տեղեկությունները զետեղված են սպառողական փաթեթվածքի, և (կամ) պիտակի, և (կամ) հակադարձ պիտակի, և (կամ) մանեկապիտակի վրա, որոնց հեռացումը սպառողական փաթեթվածքի վրայից դժվարացված է:				0.4	ակնադիտական զննում	ԵԱՏՄ ՏԿ 047/2018 կանոնակարգի 38-րդ կետ	
4.11.	Արտադրողի և անդամ պետության տարածքում գրանցված ու արտադրողի կողմից՝ ալկոհոլային արտադրանքի վերաբերյալ սպառողներից դժգոհություններ ընդունելու (առկայության դեպքում) լիազորություն ստացած կազմակերպության, ինչպես նաեւ ներմուծող կազմակերպության (երրորդ երկրներից անդամ պետությունների տարածքներ ներմուծվող ալկոհոլային արտադրանքի համար) անվանումները և գտնվելու վայրերը (իրավաբանական անձանց հասցեները) (նշելով պետությունը), արտադրանքի ծավալը՝ միավոր				0.5	ակնադիտական զննում	ԵԱՏՄ ՏԿ 047/2018 կանոնակարգի 38-րդ կետ	

	սպառողական փաթեթվածքում, բաղադրությունը, թույլ ալկոհոլային խմիչքների համար՝ տեղեկատվություն սպառողական փաթեթվածքի ծավալում էթիլային սպիրտի պարունակության վերաբերյալ տեղեկությունները զետեղվում են սպառողական փաթեթվածքի, եւ (կամ) պիտակի (հակադարձ պիտակի, մանեկապիտակի), եւ (կամ) յուրաքանչյուր փաթեթավորման միավորում տեղադրվող կամ յուրաքանչյուր փաթեթավորման միավորին կցվող ներդիր-թերթիկի վրա:							
4.12.	Արդյո՞ք ալկոհոլային արտադրանքի մակնշման ժամանակ օգտագործված են տեղեկատվության զետեղման այնպիսի միջոցներ ու եղանակներ, որոնք ապահովում են ալկոհոլային արտադրանքի փոխադրման (տրանսպորտային փոխադրման), պահպանման եւ իրացման ժամանակ դրա պահպանվածությունը:				0.3	ակնադիտական զննում	ԵԱՏՄ ՏԿ 047/2018 կանոնակարգի 39-րդ կետ	
4.13.	Արդյո՞ք սննդամթերքի էներգետիկ արժեքը (կալորիականությունը) նշված է ջոուլներով և կալորիաներով կամ նշված մեծությունների պատիկով կամ մասով արտահայտված միավորներով:				0.2	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.9 կետի 4-րդ ենթակետ	
4.14.	Արդյո՞ք սննդամթերքի մակնշվածքը հասկանալի է, դյուրընթեռնելի, հավաստի և սպառողներին (ձեռք բերողներին) մոլորության մեջ չգցող, գրառումները, նշանները, խորհրդանիշները կոնտրաստային են այն ֆոնի նկատմամբ, որի վրա զետեղված է մականշվածքը: Մականշվածքի զետեղման եղանակը ապահովում է սննդամթերքի պիտանիության ամբողջ ժամկետի ընթացքում դրա պահպանվածությունը՝ արտադրողի կողմից սահմանված պահպանման պայմանները պահպանելու դեպքում:				0.4	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.12 կետի 1-ին ենթակետ	
4.15.	Արդյո՞ք ԳՁՕ-ների օգտագործմամբ ստացված սննդամթերքի, այդ թվում՝ դեզօքսիռիբոնուկլեինաթթու (ԴՆԹ) և սպիտակուց չպարունակող սննդամթերքի համար նշված է հետևյալ տեղեկատվությունը՝ «գենետիկորեն ձևափոխված մթերք» կամ «գենաձևափոխված օրգանիզմներից ստացված մթերք» կամ «մթերքը պարունակում է գենաձևափոխված օրգանիզմների բաղադրիչներ»: Եվրասիական տնտեսական միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի կողքին զետեղված է ԳՁՕ-ների				0.1 0.1 0.1	ակնադիտական և/կամ փաստաթղթային զննում	ՄՄ ՏԿ 022/2011 հոդված 4 կետ 4.11, 1 ենթակետ	

	կիրառմամբ ստացված արտադրանքի՝ այդ նշանին ձևով եւ չափով նույնական մականշվածքը՝ «ԳՁՕ» գրառման տեսքով: Այն դեպքում, երբ արտադրողը սննդամթերքի արտադրության ժամանակ չի օգտագործել գենաձևափոխված օրգանիզմներ, ապա սննդամթերքում ԳՁՕ-ի 0,9 տոկոս և դրանից պակաս պարունակությունը համարվում է պատահական կամ տեխնիկապես չվերացվող խառնուրդ, և այդ սննդամթերքը չի դասվում ԳՁՕ պարունակող սննդամթերքների շարքին: Այդ սննդամթերքի մակնշման ժամանակ ԳՁՕ-ի առկայության մասին տեղեկություններ չեն նշվում:							
4.16.	Արդյո՞ք սննդամթերքի անվանումը, քանակությունը, սննդային արժեքի ցուցանիշները, սննդամթերքում գենաձևափոխված օրգանիզմների կիրառմամբ ստացված բաղադրիչների առկայության մասին տեղեկությունները նշված են 2 մմ-ից ոչ պակաս բարձրությամբ տառատեսակով (փոքրատառեր):				0.4	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4.12 հոդվածի 1-ին կետ	
4.17.	Արդյո՞ք սննդամթերքի բաղադրությունը՝ բացառությամբ մեկ բաղադրիչով սննդամթերքի, պահպանման պայմանները, արտադրողի անվանումը և գտնվելու վայրը կամ ներմուծողի անվանումն ու գտնվելու վայրը, պատրաստման ամսաթիվը և պիտանիության ժամկետը և օգտագործմանը, այդ թվում՝ դրա պատրաստմանը վերաբերող առաջարկությունները և (կամ) սահմանափակումները, պիտանիության ժամկետը, պատրաստման ամսաթիվը, զետեղելու մասին տեղեկատվությունը նշված են 0.8 մմ-ից ոչ պակաս բարձրությամբ տառատեսակով:				0.4	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4.12 հոդվածի 1-ին կետ	
4.18.	Արդյո՞ք շրջանառության մեջ դրված փաթեթվածքը (խցափակման միջոցները) անցել է համապատասխանության գնահատում:				0.5	փաստաթղթային զննում	Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի N 769 որոշմամբ հաստատված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) Մաքսային	

							միության տեխնիկական կանոնակարգի՝ միայն սննդամթերքի հետ շփվող փաթեթվածքի համար (այսուհետ՝ ՄՄ ՏԿ 005/2011 կանոնակարգ) 3-րդ հոդվածի 1-ին կետ	
4.19.	Արդյո՞ք փաթեթվածքը (խցանափակման միջոցները) մականշված է արտադրանքի շրջանառության միասնական նշանով, որը դրված է ուղեկցող փաստաթղթերի վրա:				0.8	փաստաթղթային զննում	ՄՄ ՏԿ 005/2011 կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին կետ	
4.20.	Արդյո՞ք փաթեթավորման գործընթացները կատարվում են սննդամթերքի աղտոտումը բացառող պայմաններում՝ ապահովելով փաթեթավորման ամբողջականությունն ու մաքրությունը:				0.5	ակնադիտական զննում	Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 66-րդ կետ	
4.21.	Արդյո՞ք բազմակի օգտագործման փաթեթավորման նյութերն ու բեռնարկղերը հեշտությամբ մաքրվող և ախտահանվող են:				0.5	ակնադիտական զննում	Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի 67-րդ կետ	
4.22.	Արդյո՞ք սննդամթերքի փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) իրականացվում է տրանսպորտային միջոցներով՝ այդ արտադրանքը պատրաստողի կողմից սահմանված փոխադրման				0.5	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 17-րդ հոդվածի 1-ին կետ	

	(տրանսպորտային փոխադրման) պայմաններին համապատասխան, իսկ դրանց բացակայության դեպքում՝ այդ արտադրանքը պատրաստողի կողմից սահմանված սննդամթերքի պահպանման պայմաններին համապատասխան:							
4.23.	Արդյո՞ք միաժամանակ սննդամթերքի տարբեր տեսակների կամ սննդամթերքի և այլ բեռների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար տրանսպորտային միջոցների և (կամ) բեռնարկղերի օգտագործումը իրականացվում է սննդամթերքի հետ շփումը, աղտոտումը և զգայորոշման հատկությունների փոփոխումը բացառող պայմաններում:				0.2	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 17-րդ հոդվածի 2-րդ կետ	
4.24.	Արդյո՞ք տրանսպորտային միջոցների բեռնային բաժանմունքների և բեռնարկղերի ներքին մակերևույթը պատրաստված են լվացվող նյութերից:				0.2	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 17-րդ հոդվածի 5-րդ կետ	
4.25.	Արդյո՞ք սննդամթերքի պահպանման ժամանակ պահպանվում են պատրաստողի կողմից սահմանված պահպանման պայմանները և պիտանիության ժամկետը:				1	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 17-րդ հոդվածի 7-րդ կետ	
4.26.	Արդյո՞ք սննդամթերքը չի պահպանվում այլ տեսակի սննդամթերքի և ոչ սննդային արտադրանքի հետ այն դեպքում, երբ դա կարող է հանգեցնել սննդամթերքի աղտոտմանը:				0.5	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 17-րդ հոդվածի 8-րդ կետ	
4.27.	Արդյո՞ք պահպանվող սննդամթերքը ուղեկցվում է տվյալ արտադրանքի պահպանման պայմանների, պիտանիության ժամկետի մասին տեղեկատվությամբ:				0.5	ակնադիտական և/կամ փաստաթղթային զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 17-րդ հոդվածի 9-րդ կետ	
4.28.	Արդյո՞ք տրանսպորտային փաթեթվածքի մակնշումը ներառում է հետևյալ տեղեկատվությունը՝ 1) սննդամթերքի անվանումը. 2) սննդամթերքի քանակությունը. 3) սննդամթերքի պատրաստման ամսաթիվը. 4) սննդամթերքի պիտանիության ժամկետը. 5) սննդամթերքի պահպանման պայմանները. 6) տեղեկություններ, որոնցով հնարավոր է նույնականացնել սննդամթերքի խմբաքանակը (օրինակ՝ խմբաքանակի համարը). 7) սննդամթերքն արտադրողի անվանումը եւ գտնվելու				 0.5 0.2 0.5 0.5 0.5 0.1 0.1	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.2-րդ կետի 1-ին ենթակետ	

	վայրը կամ սննդամթերքն արտադրող անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը, անունը, հայրանունը եւ գտնվելու վայրը: Արդյո՞ք այն դեպքում, երբ տրանսպորտային փաթեթվածքի մեջ տեղադրված է հետագա չափածրարման համար արտադրողի կողմից նախատեսված՝ առանց սպառողական փաթեթվածքի սննդամթերք (կոնֆետներ, շաքարավազ եւ այլ սննդամթերք), ապա տրանսպորտային փաթեթվածքի մականշվածքը, որի մեջ տեղադրված է այդ սննդամթերքը, ներառում է փաթեթավորված սննդամթերքի մականշվածքի համար անհրաժեշտ տեղեկությունները:							
4.29.	Արդյո՞ք սննդամթերքի անվանման մեջ նշված չեն այնպիսի բաղադրիչներ, որոնք կամ դրանց վերամշակումից հետո ստացվող մթերքները չեն մտնում սննդամթերքի բաղադրության մեջ:				0.1	ակնադիտական, փաստաթղթային զննում և/կամ լաբորատոր փորձաքննություն	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.3-րդ կետի 4-րդ ենթակետ	
4.30.	Արդյո՞ք այն դեպքում, երբ սննդամթերքի բաղադրության մեջ օգտագործվում է բուրավետիչ, ապա այդ բուրավետիչով փոխարինված և սննդամթերքի բաղադրության մեջ չմտնող բաղադրիչի անվանումը ներառվում է սննդամթերքի անվանման մեջ՝ օգտագործելով հետևյալ բառերը՝ համով և (կամ) բույրով:				0.1	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.3-րդ կետի 5-րդ ենթակետ	
4.31.	Արդյո՞ք սննդամթերքի բաղադրության մեջ մտնող բաղադրիչները նշված են սննդամթերքի արտադրման պահի դրությամբ դրանց զանգվածային մասի նվազման կարգով: Տվյալ բաղադրիչները նշելուց անմիջապես առաջ զետեղված է «Բաղադրությունը» գրառումը:				0.1	ակնադիտական, փաստաթղթային զննում և/կամ լաբորատոր փորձաքննություն	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.4-րդ կետի 1-ին ենթակետ	
4.32.	Արդյո՞ք սննդամթերքի մեջ բարդ բաղադրիչի (երկու և ավելի բաղադրիչներից կազմված) առկայության դեպքում սննդամթերքի բաղադրության մեջ նշվում է այդ բարդ բաղադրիչի բաղադրության մեջ մտնող բոլոր բաղադրիչների ցանկը, կամ նշվում է բարդ բաղադրիչը, որին փակագծերում լրացնում են բաղադրիչները՝ իրենց զանգվածային մասի նվազման կարգով: Այն բարդ բաղադրիչները, որոնց զանգվածային մասը կազմում է 2 տոկոս եւ դրանից պակաս, մակնշված չեն, բացառությամբ տեխնիկական կանոնակարգով սահմանված դեպքերի:				0.1	ակնադիտական և/կամ փաստաթղթային զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.4-րդ կետի 2-րդ և 14-րդ ենթակետեր	

4.33.	Արդյո՞ք սննդամթերքի մեջ բուրավետիչի առկայության դեպքում բաղադրության մասին մականշվածքը պարունակում է «բուրավետիչ (բուրավետիչներ)» բառը:				0.1	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.4-րդ կետի 5-րդ ենթակետ	
4.34.	Արդյո՞ք սննդամթերքի բաղադրության մեջ սննդային հավելման առկայության դեպքում նշված է ֆունկցիոնալ (տեխնոլոգիական) նշանակությունը (թթվայնության կարգավորիչ, կայունացուցիչ, էմուլգատոր, ֆունկցիոնալ (տեխնոլոգիական) այլ նշանակություն) եւ սննդային հավելման անվանումը, որը կարող է փոխարինվել սննդային հավելման ինդեքսով՝ Համարակալման միջազգային համակարգի (INS) կամ Համարակալման եվրոպական համակարգի (E) համաձայն: Եթե սննդային հավելումն ունի զանազան ֆունկցիոնալ նշանակություններ, ապա նշվում է դրա օգտագործման նպատակին համապատասխանող ֆունկցիոնալ նշանակությունը: Սննդամթերքի բաղադրության մեջ նշվում է սննդամթերքի արտադրության ժամանակ որպես բաղադրիչ օգտագործվող ածխածնի երկօքսիդը՝ սննդամթերքի մականշվածքի մեջ «Գազավորված» կամ համանման գրառման բացակայության դեպքում:				0.3	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.4-րդ կետի 6-րդ ենթակետ	
4.35.	Արդյո՞ք այն սննդամթերքի մականշվածքը, որի բաղադրության մեջ մտնում են քաղցրացուցիչներ՝ շաքարասպիրտներ, սննդամթերքի բաղադրությունը նշելուց անմիջապես հետո լրացված է հետեյալ գրառմամբ՝ Պարունակում է քաղցրացուցիչ (քաղցրացուցիչներ): Չափից ավելի օգտագործման դեպքում կարող է (կարող են) ունենալ թուլացնող ազդեցություն:				0.3	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.4-րդ կետի 12-րդ ենթակետ	
4.36.	Արդյո՞ք բաղադրության մեջ ասպարտամի և/կամ ասպարտամ-ացեսուլֆամի աղի առկայության դեպքում մակնշվածքում առկա է «Պարունակում է ֆենիլալանինի աղբյուր» գրառումը:				0.3	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.4-րդ կետի 15-րդ ենթակետ	
4.37.	Արդյո՞ք բաղադրիչները (այդ թվում՝ սննդային հավելումները, բուրավետիչները), կենսաբանական ակտիվ հավելումները, որոնց օգտագործումը կարող է առաջացնել ալերգիկ ռեակցիաներ կամ հակացուցված է հիվանդությունների առանձին տեսակների դեպքում,				0.3	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.4-րդ	

	նշվում են սննդամթերքի բաղադրության մեջ՝ անկախ դրանց քանակությունից:						կետի 13-րդ և 14-րդ ենթակետեր	
4.38.	Արդյո՞ք սննդանյութերի, այդ թվում՝ սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի քանակությունը սննդամթերքում նշված է գրամով կամ նշված մեծությունների պատիկով կամ մասով արտահայտված միավորներով:				0.1	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.9-րդ կետի 5-րդ ենթակետ	
4.39.	Արդյո՞ք սննդամթերքում վիտամինների և հանքային նյութերի քանակությունը նշված է Միավորների միջազգային համակարգում (ՁՀ) նշված մեծությունների միավորներով (միլիգրամներով կամ միկրոգրամներով) կամ ԵԱՏՄ անդամ պետություններում կիրառման համար թույլատրված այլ մեծությունների միավորներով՝ ԵԱՏՄ անդամ պետությունների՝ չափումների միասնականության ապահովման ոլորտի օրենսդրությանը համապատասխան:				0.2	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.9-րդ կետի 6-րդ ենթակետ	
4.40.	Արդյո՞ք այն սննդամթերքի համար, որն ստացվել է գենաձևափոխված միկրոօրգանիզմներից (մանրէներից, խմորասնկերից եւ միցելային սնկերից, որոնց գենետիկ նյութը փոփոխված է գենային ինժեներիայի մեթոդների կիրառմամբ) (այսուհետ՝ ԳՁՄ) կամ ստացվել է այդ միկրոօրգանիզմների օգտագործմամբ, պարտադիր նշված է հետեւյալ տեղեկատվությունը՝ - կենդանի ԳՁՄ-ներ պարունակող մթերքների համար՝ «Մթերքը պարունակում է կենդանի գենաձևափոխված միկրոօրգանիզմներ». - ոչ կենսունակ ԳՁՄ-ներ պարունակող մթերքների համար՝ «Մթերքն ստացվել է գենաձևափոխված միկրոօրգանիզմների օգտագործմամբ». - տեխնոլոգիական ԳՁՄ-ներից մաքրված մթերքների կամ ԳՁՄ-ներից մաքրված բաղադրիչների օգտագործմամբ ստացված մթերքների համար՝ «Մթերքը պարունակում է բաղադրիչներ, որոնք ստացվել են գենաձևափոխված միկրոօրգանիզմների օգտագործմամբ»:				0.1 0.1 0.1	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.11-րդ կետի 2-րդ ենթակետ	
4.41.	Արդյո՞ք 1) ալկոհոլային արտադրանքում կիրառված չեն այնպիսի բաղադրիչներ, որոնք նախատեսված չեն այն փաստաթղթով (փաստաթղթերով), որին համապատասխան արտադրված է				0.1	ակնադիտական զննում	ԵԱՏՄ ՏԿ 047/2018 կանոնակարգի 17-րդ կետ	

	ալկոհոլային արտադրանքը (ստանդարտ, կազմակերպության ստանդարտ, տեխնիկական պայմաններ (առկայության դեպքում) կամ այլ փաստաթուղթ). 2) ալկոհոլային արտադրանքում խաղողի սորտերի փոխարինում կամ դրանց խառնում չի իրականացվում այն դեպքերում, եթե դա նախատեսված չէ այն փաստաթղթով (փաստաթղթերով), որին համապատասխան արտադրված է ալկոհոլային արտադրանքը (ստանդարտ, կազմակերպության ստանդարտ, տեխնիկական պայմաններ (առկայության դեպքում) կամ այլ փաստաթուղթ). 3) ալկոհոլային արտադրանքի մեջ ոչ սննդային հումքից ստացված էթիլային սպիրտ չի ավելացվում:				0.1 0.1		«ա», «բ» և «գ» ենթակետեր	
4.42.	Արդյո՞ք «Պատրաստման ամսաթիվը» բառերից հետո նշվում է սննդամթերքի պատրաստման ամսաթիվը կամ սպառողական փաթեթվածքի վրա այդ ամսաթիվը նշելու տեղը:				0.1	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.6-րդ կետի 2-րդ ենթակետ	
4.43.	Արդյո՞ք «Պիտանի է մինչեւ», «պիտանի է», «պիտանի է մինչեւ... ավարտը» բառերից հետո նշված է կա՛մ սննդամթերքի պիտանիության ժամկետը, կա՛մ փաթեթվածքի վրա այդ ժամկետը նշելու տեղը:				0.1	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.7-րդ կետի 3-րդ ենթակետ	
5.	**ՀՈՒՄՔԻ ԵՎ ՊԱՏՐԱՍՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ**							
5.1.	Արդյո՞ք արտադրությունում չի իրացվում պարենային (սննդային) հումք, անկախ այն հանգամանքից, թե պիտանիության ժամկետի նշումը որ լեզվով է կատարված, եթե՝ 1) պիտանիության ժամկետն անցած է. 2) փաթեթավորման կամ տարայի վրա պիտանիության ժամկետը բացակայում է կամ ընթեռնելի չէ. 3) ժամկետը կրկնակի մակնշված է կամ բնօրինակ պիտանիության ժամկետը ջնջված է, և նշված է պիտանիության նոր ժամկետ:				0.8 0.8	ակնադիտական զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մաս	

5.2.	Արդյո՞ք ընդունվող հումքը համապատասխանում է դրանց անվտանգության պահանջներին և ունի անվտանգությունը հավաստող (հիմնավորող) փաստաթղթեր:				1	ակնադիտական և փաստաթղթային զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մաս	
5.3.	Արդյո՞ք սննդամթերքը, այդ թվում՝ պարենային (սննդային) հումքը ուղեկցվում են տվյալ արտադրանքի հետագծելիությունն ապահովող՝ ապրանքաուղեկից փաստաթղթերով:				0.8	փաստաթղթային զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 5-րդ հոդվածի 3-րդ կետ	
5.4.	Արդյո՞ք սննդամթերքում առկա չէ մարդու և կենդանիների առողջության համար վտանգ ներկայացնող՝ վարակիչ, մակաբուծային հիվանդությունների հարուցիչներ, դրանց տոքսիններ:				0.8	փաստաթղթային զննում և/կամ լաբորատոր փորձաքննություն	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 7-րդ հոդվածի 5-րդ կետ	
5.5.	Արդյո՞ք պատրաստողները վարում և պահում են սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման վերաբերյալ փաստաթղթերը՝ ներառյալ կենդանական ծագման չմշակված պարենային (սննդային) հումքի անվտանգությունը հավաստող փաստաթղթերը՝ թղթային և (կամ) տեղեկատվության էլեկտրոնային կրիչներով:				0.8	փաստաթղթային զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 11-րդ հոդվածի 4-րդ կետ	
5.6.	Արդյո՞ք չի արտադրվում վտանգավոր և կեղծված սննդամթերք:				1.5	ակնադիտական, փաստաթղթային զննում և/կամ լաբորատոր փորձաքննություն	«Սննդամթերքի անվտանգության մասին» օրենք 20-րդ հոդվածի 1-ին մաս	
5.7.	Արդյո՞ք ալկոհոլային արտադրանքի արտադրության ժամանակ օգտագործվող հումքը հետագծելի է:				0.5		ԵԱՏՄ ՏԿ 047/2018 կանոնակարգի 21-րդ կետ	
6.	**ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ**							
6.1.	Արդյո՞ք սննդամթերքի արտադրությունը տեխնոլոգիական գործելակարգը (ռեժիմը) և տեխնոլոգիական գործընթացը իրականացվում է տվյալ սննդամթերքի համար արտադրողի հաստատած տեխնոլոգիական հրահանգին համապատասխան:				0.8	փաստաթղթային զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մաս	

6.2.	Արդյո՞ք արտադրվող սննդամթերքի տեխնոլոգիական հրահանգները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված տեխնոլոգիական հրահանգին ներկայացվող պահանջներին:				0.8	փաստաթղթային զննում	Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 885-Ն որոշման հավելվածի 5-րդ կետ	
6.3.	Արդյո՞ք սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացների իրականացման ժամանակ, արտադրողի (պատրաստողը) կողմից մշակվել, իրականացվում և պահպանվում է վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի (ՎՎՀԿԿ) (անգլերեն տարբերակը՝ HACCP — Hazard Analysis and Critical Control Points) սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերը:				0.8	փաստաթղթային զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 10-րդ հոդվածի 2-րդ կետ	

1.	«Այո»՝ առկա է, համապատասխանում է, բավարարում է («Այո»՝ նշվում է հարցում ներառված պահանջների կեսի և կեսից ավելիի դրական պատասխանի դեպքում, որը չի կշռավորվում)	V		
2.	«Ոչ»՝ ոչ, առկա չէ, չի համապատասխանում, չի բավարարում («Ոչ»՝ նշվում է հարցում ներառված պահանջների՝ մինչև կեսի դրական պատասխանի դեպքում, որը կշռավորվում է)		V	
3.	«Չ/Պ»՝ չի պահանջվում, չի վերաբերում			V

Ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա՝

1. «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենք

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշմամբ հաստատված «Սննդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՄՄ ՏԿ 029/2012) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 885-Ն որոշում

4. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 880 որոշմամբ հաստատված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ

5. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 881 որոշմամբ հաստատված «Սննդամթերքի մակնշման մասին» (ՄՄ ՏԿ 022/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ

6. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 5-ի «Ալկոհոլային արտադրանքի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի մասին» N 98 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ ՏԿ 047/2018 կանոնակարգ:

ՍԱՏՄ ծառայող _____ Տնտեսավարող _____

(ստորագրությունը) (ստորագրությունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Բ. ԲԱԴԱԼՅԱՆ

12.08.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ